Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՀՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ

ՀՏԴ 941 (479.25):325
ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)
Շ 973

Գիտաժողովը նվիրվում է
Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին

Տպագրվում է գիտաժողովի խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
Արտակ Մաղալյան

Գիտաժողովի ծրագրային կոմիտե՝
Արամ Սիմոնյան – ԵՊՀ ռեկտոր, **Վլադիմիր Բաբխուդարյան** – ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, **Բաբկեն Հարությունյան** – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, **Աշոտ Մելքոնյան** – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, **Ռուբեն Սաֆրաստյան** – ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, **Աբրահամ Աղասյան** – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, **Պավել Ավետիսյան** – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Շ 973 ՇՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ: Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր: – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, – 370 էջ + 1 էջ ներդիր:

ԳՄԴ 63.3(2Հ)+66.3(2Հ)

ISBN 978-5-8080-0715-4
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2007

ՀՐԱՆՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ԵՐԵՔ ԴՐՎԱԳ ՇՈՒՇԻԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳՐԻՑ
(20-րդ դար)

Շուշի քաղաքը հանդիսացել է հայ մշակույթի կենտրոն: Անդրկովկասում Թիֆլիսից և Բաքվից հետո երրորդ տեղում էր: Այստեղ զարգանում էին արհեստագործությունը, առևտուրը և մշակույթը: Շուշին աշխարհին տվել է բազմաթիվ անվանի գիտնականներ, մշակույթի ներկայացուցիչներ, հեղափոխական գործիչներ, զինվորականներ: Լեռների վրա ծվարած այդ քաղաքը 1905 թ. ուներ 33187 բնակիչ: Այդ ժամանակ Շուշիում գործում էին թեմական, ռեալական, քաղաքային ուսումնարաններ, օրիորդաց գիմնազիա, Նիկիտա Խանդամիրյանի թատրոնը, տպարան, գրադարան, հիվանդանոց և այլ օջախներ: Հենց այդ ժամանակ է, որ հայոց պարծանք Շուշիի վրա սև ամպեր կուտակվեցին:

Դրվագ առաջին. Անդրկովկասում հայ-թուրքական ընդհարումները ոչ մի տեղ այն աստիճանի արյունալի չեն եղել, որքան Շուշիում և ողջ Արցախում: 1905 թ. Շուշիի հայկական և թուրքական մասերի, որոնք, ըստ Խաչիկ վրդ. Դադյանի, բաժանված էին 35 թաղամասերի[1], մեջտեղում ընկած էր հայկական շուկան՝ Մեծ մեյդանը, որը կոչվում էր նաև Թոփխանա: Թե՛ Մեծ մեյդանը և թե՛ քաղաքի երեք փողոցները՝ Թատրոնի, Ագուլեցոց եկեղեցու և Փոստի, որոնք կազմում էին քաղաքի զարդը, գտնվում էին թուրքերի ուշադրության կենտրոնում: 1905–1906 թթ. ազգային ընդհարումների ժամանակ Շուշիի պաշտպանության ղեկավարությունը իր վրա էր վերցրել 1897 թ. Խանասորի հերոսական արշավանքի հրամանատար

[1] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 319, ց. 1, գ. 1, թ. 52:

Վարդան Մեհրաբյանը: Հայկական ամեն մի թաղամաս ուներ թաղապետ և օգնական: Թաղամասերի ռազմավարական կարևոր կետերը վերածվել էին դիրքերի, որտեղ ամեն մեկում հսկում էին 4–10 կամավորներ: Կազմակերպվել էին նաև թռուցիկ խմբեր[2]:

Շուշիում առաջին մարտերը տեղի են ունեցել 1905թ. օգոստոսի 16–22-ը: Առաջին օրը Մեծ մեյդանում և Աղաբեկանց ձորում ընկան 20-ից ավելի հայեր և թուրքեր: Չնայած հաջորդ օրը ցարական զորամասը դուրս եկավ փողոց, սակայն միայն դիտողի դերում էր: Բազմաթիվ բողոք-հեռագրեր ուղարկվեցին ցար Նիկոլայ 2-ին, փոխարքա Վորոնցով-Դաշկովին և նահանգապետ Տակայաշվիլուն:

Հայերը կռվում էին խիզախաբար: Օրինակ. 19-ամյա Իշխան Հեյբաթյանը իր վրա հարձակված թուրքերից սպանեց 17 հոգու[3]: Օգոստոսի 17-ին հայերը գերի վերցրին 100-ից ավելի թուրք կռվողների[4]: Այդ օրը հերոսի մահով ընկավ Շուշիի պայքարի ոգին՝ Մարգար Ժամհարյանը[5]: Թուրքերը տեսնելով, որ ոչինչ չեն կարող անել, սկսեցին հրդեհել հայերի տները: Պայքարն ավելի սաստկացավ, երբ օգոստոսի 18-ին Շուշի ներխուժեցին Աղդամից իրենց ցեղակիցներին օգնության եկած թուրք կամավորները: Ղումլուղի կողմից սկսված հրդեհը տարածվում էր և իրար ետևից լափում բազմաթիվ շինություններ: Քամին փչում էր դեպի հայոց թաղամասի կողմը և ավելի տարածում հրդեհը: Հայերը, դուրս գալով դիրքերից, թշնամուն ետ մղեցին Քամու ալրաղացի և Ագուլեցոց եկեղեցու մոտից: Այդ օրը՝ 1905 թ. օգոստոսի 18-ին, թուրքերից զոհ-

[2] «Դրօշակ», 1905, N 12, էջ 184; Ա-ԴՕ, Հայ թուրքական ընդհարումը Կովկասում (1905–1906 թթ.), Ե., 1907, էջ 148–149, *Մ. Վարանդյան*, ՀՅ Դաշնակցութեան պատմութիւն, Ե., 1992, էջ 184, *Հ. Սիմոնյան*, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 1, Ե., 2003, էջ 369 և այլն:
[3] «Դրօշակ», 1905, N 12, էջ 184:
[4] Նույն տեղում:
[5] «Հայրենիք» (Բոստոն), 1936, N 11, էջ 90:

վեցին 85, իսկ հայերից՝ 10 մարդ[6]:

Հրդեհը հասել էր սոսկալի չափերի: Թոփխանայից սկսած մինչև Խանի աղջկա աղբյուրը և Հին գերեզմանոցի թաղը հրդեհի մեջ էր: Եվ չնայած դրան մարտերը շարունակվում էին: Հաջորդ երկու օրերին հայերը տվել էին 40 զոհ և 68 վիրավոր, վառվել էին 370 մեծ և փոքր շինություններ, ոչնչացվել էր ապրանքներով լի 200 խանութ: Հայերի նյութական վնասները կազմեցին 5 միլիոն ռուբլի[7]: Թուրքերի զոհերի թիվը կրկնապատիկ էր, սակայն նյութական վնասը՝ նվազ. ավերվել և հրդեհվել էին 150 տուն և մի քանի խանութներ: Տնտեսական վնասը հասել էր 30 հազար ռուբլու:

Շուշիում հայ-թուրքական երկրորդ խոշոր ընդհարումը տեղի ունեցավ 1906 թ. հուլիսի 12–22-ը: Թուրքերը կարծում էին, թե գրավելով Շուշին՝ կդյուրացնեն թուրք քոչվորների վիճակը, որոնք իրենց անասունները սար էին տանում հիմնականում Շուշիի միջով: Այս արյունալի մարտերին մասնակցեցին 1000 զինված թուրք և 700 հայ ինքնապաշտպաններ: Հայերը հենց սկզբից դիմեցին հարձակման Ղումլուղի թաղի դիրքեր: Հայերը իրենց ձեռքն էին վերցրել կռվի նախաձեռնությունը[8]: Քաղաքում գտնվող ռուսական զորքը գեներալ Գոլոշչապովի գլխավորությամբ մեկ պաշտպանում էին հայերին, մեկ՝ թուրքերին: Հուլիսի 12-ին հայերին հաջողվեց վառել թուրքերի տասնյակ տներ: Մշեցի Ավոն, Միսաքը, Հարութը և այլ կռվողներ իրենց հանդուգն գործողություններով և կոչերով հայ ինքնապաշտպաններին մղում էին սխրագործությունների: Մարտերի առաջին երկու օրում հայերը կրակել էին 80 հազար փամփուշտ[9]: Հուլիսի 13-ին գավառից հայերին օգնության եկան 120 կռվողներ: Այդ օրը՝ կեսօրին, միանգամից սկսեց գործել հայերի 7 թնդանոթ, որը սարսափ առաջացրեց

[6] Ա-ԴՕ, նշվ. աշխ., էջ 153:
[7] «Դրօշակ», 1905, N 11, էջ 167:
[8] «Ալիք», N 77, 1. 08. 1906:
[9] *Մ. Վարանդյան*, նշվ. աշխ., էջ 130:

թուրքերի թաղամասում: Այդ գիշեր թուրքերը գտնվում էին Դերբենդյան գնդի պաշտպանության տակ: Հայերը փակել էին քաղաք մտնող ճանապարհները: Հուլիսի 13-ի երեկոյան թուրքական թաղամասում վառվում էր շուրջ 100 տուն: Թուրքերի խնդրանքով սկսվեցին բանակցությունները երկու կողմերի միջև: Այն ընդհատվեց, և հուլիսի 15-16-ը տեղի ունեցած մարտերի ժամանակ թուրքերը կորցրին 40 մարդ: Հաշտության բանակցությունները վերսկսվեցին հուլիսի 17-ին: Հուլիսի 22-ի առավոտյան կրակոցները դադարեցին: Միայն այդ վերջին օրը հայերը տվեցին 24 սպանված, թուրքերը՝ 190[10]: Այս երկրորդ ընդհարման ժամանակ թուրքերի թե՛ ֆիզիկական և թե՛ նյութական վնասները մի քանի անգամ գերազանցում էին հայերի վնասներին:

Դրվագ երկրորդ. 1905–1906 թթ. հայ-թուրքական ընդհարումների հետքերը դեռ չէին վերացվել, երբ կրկին տեղի ունեցան ավելի ողբերգական իրադարձություններ, որոնց հիմնական կազմակերպիչները մուսուլման վանդալներն էին: 1918–1920 թթ. ամենասարսափելի իրադարձությունները տեղի ունեցան Շուշիում, որի հետևանքով մոխրի վերածվեց քաղաքի հայկական թաղամասը: Դեռևս 1919 թ. հունվարին մուսավաթական Ադրբեջանի կառավարության կողմից անգլիական հրամանատարության համաձայնությամբ Ղարաբաղ-Զանգեզուրի նահանգապետ նշանակված հայության դահիճ Խոսրովբեկ Սուլթանովը վաղուց էր նախապատրաստվել Շուշիի հայկական թաղամասը մատնել հրի ու սրի: Նա նախօրոք Շուշիում և հարևան մուսուլմանական բնակավայրերում կենտրոնացնելով թուրք հրոսակների, սպասում է հարմար առիթի: Նախօրոք քաղաքի մուսուլմաններին բաժանվել էր նավթ և լուցկի ու հրամայվել անհրաժեշտության դեպքում թալանել հայերի ունեցվածքը և վառել բոլոր տները: 1920 թ. մարտի 22-ի երեկոյան, նովրուզբայրամի գիշերը (նոր տար-

[10] Ա-ԴՕ, նշվ. աշխ., էջ 166, «Դրօշակ», 1906, N 8, էջ 115:

վա), լուր ստանալով, թե իբրև քաղաք է թափանցել հայկական մի ջոկատ ու փորձել հայկական թաղամասում գտնվող զորանոցներում տեղավորված թուրք ասկյարներին զինաթափ անել, հրամայում է «սրի ու հրի մատնել հայկական քաղաքամասը»[11]: Մահմեդական մոլեռանդ խուժանը թուրք և սպաների, և ասկյարների գլխավորությամբ ներխուժում է հայկական թաղամաս, կողոպտում, հրդեհում տները, հասարակական շենքերը, անխնա կոտորում բնակչությանը: Բնակիչները չէին կարողանում դուրս գալ վառվող տներից, որովհետև դուրս եկողները գնդակահարվում էին: Այդ ժամանակ քաղաքի վրա նստած էր թանձր մառախուղ: Մեկը գոռում էր, թե Քարին տակ տանող ճանապարհը բաց է, այն գտնվում է հայերի ձեռքում: Անպաշտպան մնացած հայերը շարժվում են դեպի այդ կողմը: Վառվող տների բոցերը երկինք էին բարձրացել: Բնակչության մի մասը հավաքվել էր քաղաքի այգու մոտ և հույս ուներ, թե դահիճ Սուլթանովը կփրկի իրենց: Սակայն բոլորն էլ ջարդվեցին թուրքերի կողմից: Քաղաքից հազիվ դուրս եկավ և մահվան ճիրաններից փրկվեց 4880 հոգի: Մի քանի օրվա ընթացքում հայկական թաղամասը վերածվեց մոխրի և ավերակների: Արցախահայության համար այդ սարսափելի բարդուղիմեոսյան գիշերը Շուշիում գլխատվեցին հազարավոր տղամարդիկ, կանայք և երեխաներ: Փրկվածները Քարին տակ գյուղից տանող արահետով մառախուղի միջով ցած են իջնում և անցնում Վարանդա ու Դիզակ: Քաղաքում մնացած 5000 մարդուց 2200-ը գերի են վերցվում, իսկ մնացածը գլխատվում են փողոցներում[12]:

Թիֆլիսում տպագրվող «Սլովո» թերթը գրել է. «Քաղաքի հայկական մասում չի մնացել քարը քարի վրա: Մուսուլմանական խուժանը մարտի 23-ին ներս է խուժել այդ մասը և սկսել սպանել հայ բնակիչներին: Մտնում էին տները, սպանում տան տերերին, հափշտակում բոլոր արժեքավոր իրերը և ապա

[11] ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 34, թ. 223:
[12] Նույն տեղում, ֆ. 4033, ց. 5, գ. 461, թ. 165–166:

տունը հրդեհում... Ամենուրեք լսվում էին ճիչեր, հառաչանքներ և լաց...»[13]: Հայտնի վիճակագիր Բախշի Իշխանյանի հաշվումներով այդ օրերին Շուշիում զոհվել է 8988 հայ[14]: Ականատեսների վկայությամբ ամբողջ մեկ ամիս հրդեհը չէր մարում: Հայկական թաղամասի 7000 տնից հազիվ մի քանի շինություն է փրկվել հրդեհից: Վանդալները, ներխուժելով առաջնորդարան, գլխատում են Արցախի թեմի առաջնորդ Վահան եպս. Տեր-Գրիգորյանին, գլուխը ցից հանում և պտտեցնում քաղաքի թուրքական թաղամասում: Այդ օրը զոհվեցին նաև Ղարաբաղի բոլշևիկների ղեկավար Ալ. Ծատուրյանը, հայտնի բժիշկ Յարամիշյանը, բանաստեղծներ Ջանումյանն ու Փիրջանյանը, անվանի մանկավարժներ Թավրիզյանը և Տեր-Գաբրիելյանը, մշակույթի շատ գործիչներ: Այդ օրերին քաղաքում մուսուլմանների կատարած գազանությունների մասին ահա թե ինչ են պատմում ականատեսները: «Մենք,- պատմում է տասնվեցամյա Սուրենը,- արթնացանք կրակոցներից: Ես ու հայրս դուրս եկանք բակ: Հանկարծ մեր բակ են ներխուժում զինված վեց թուրք: Երեք թուրք գնդակահարում են հորս: Կրակոցների վրա փախչում է մեր ամբողջ ընտանիքը: Թուրքերը նետվում են նրանց վրա: Երկու թուրք բռնաբարում են մորս և հետո սպանում: Հետո բռնաբարում են երկու փոքր եղբայրներիս ու նրանց էլ սպանում: Բռնաբարում են ավագ քրոջս և նրան էլ սպանում: Մի հաղթանդամ ասկյար բռնում է երեք տարեկան քրոջս՝ Անահիտի ոտքերից, գլուխը խփում պատին և մարմինը շպրտում աստիճանի կողմը»[15]:

«Երբ թուրքերը ներխուժեցին բակ,- պատմում է Տաթևիկ Տեր-Սահակյանցը,- սկսեցին բոլորին հերթով բռնել: Կանանց և աղջիկներին բռնաբարում էին, գեղեցիկներին վերցնում իրենց համար, իսկ մնացածներին սպանում: Տղաներին ևս

[13] «Слово», 16 апреля, 1920:
[14] «Յառաջ», 1 ապրիլի, 1920:
[15] *З. Мелик-Шахназаров.* Записки Карабахского солдата. М., 1995, с. 40–41:

բռնաբարում էին ու սպանում: Այնուհետև սկսում են հաշվեհարդար տեսնել գերի տղամարդկանց և պատանիների հետ, որոնց նախօրոք կապկպել էին: Նրանց հերթով բերում էին կաշվի գոգնոցով դահիճի մոտ, որը սուր դանակը ձեռքին նստած էր աթոռին: Առաջինը նրա մոտ բերեցին գեղեցկահասակ, երկարամիրուք քահանա Տեր-Հարությունյանին: Նրա ձեռքերը կապված էին թիկունքին, ոտքերը՝ շղթայված: Դահիճը նրան գցում է մեջքի վրա, գլուխը դնում ծնկանը, հետո բռնում միրուքը և ցուցադրաբար դանակով կտրում գլուխը...»[16]: Իսկ երբ հերթը հասավ Տաթևիկի 14 տարեկան տղային, նա արդեն կորցրել էր իր գիտակցությունը...

Դրվագ երրորդ. հավատարիմ մնալով իր հակահայ քաղաքականությանը, թուրք-ազերիները նույնիսկ թույլ չտվեցին՝ հայերը վերականգնեն Շուշին: Ընդհակառակը, խորհրդային իշխանության տարիներին ամեն ինչ անում էին Շուշիում բնաջնջելու այն ամենը, ինչը հայկական էր: 1988 թ. մայիսին և սեպտեմբերին այնտեղից արտաքսվեցին բոլոր հայերը, և քաղաքը վերածվեց թուրք վայրագների որջի: Այստեղից օր ու գիշեր «ալազաններով» և «գրադներով» ավերում էին մարզկենտրոն Ստեփանակերտը: Արդեն 1992 թ. գարնանը Շուշիի կրակակետերի ոչնչացումը դարձել էր պատմական անհրաժեշտություն: Մինչ այդ հայ ինքնապաշտպանական ուժերը ոչնչացրել էին Տողի, Մալիբեկլուի, Խոջավենդի, Ղարադաղլուի, Վերին Վիյալուի, Խոջալուի և այլ կրակակետեր: Թուրք բարբարոսները չէին դադարում Ստեփանակերտի և հարևան բնակավայրերի հրետակոծումը: ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունը 1992 թ. մայիսի 1-ին, դիմելով աշխարհի պետություններին, տեղյակ պահեց, որ Լեռնային Ղարաբաղի բնակչությունը սովահար է, զուրկ ջրից, էլեկտրականությունից, ապրելու հնարավորությունից[17]: Բավական է նշել, որ 1991 թ. նոյեմբերից մինչև 1992թ. մայիսի սկիզբը թուրքական

[16] Նույն տեղում, էջ 43–44:
[17] «Երկիր», 26. 05. 1992:

կրակակետերից Ստեփանակերտի վրա արձակվել էր 4741 արկ, որից մոտ 3 հազարը «գրադ» կայանքներից: Այդ հրետակոծությունների հետևանքով զոհվել են 111, վիրավորվել 332 բնակիչներ՝ մեծ մասը կանայք, երեխաներ և ծերեր: Ավերվել էր 370 շինություն[18]: Միայն մայիսի առաջին շաբաթում Շուշիից Ստեփանակերտի վրա արձակվել է 1000 արկ, որից 800 ռեակտիվ: Այդ ամենի հետևանքով զոհվել է 20 խաղաղ բնակիչ, փլատակների են վերածվել հարյուրավոր բնակելի տներ և մի շարք ձեռնարկություններ: Այդ օրերին անընդհատ Շուշի էին ժամանում զինամթերքներով բեռնավորված մեքենաների շարասյուներ: Մայիսի 7-ին հակառակորդի «Մի-21» երեք մարտական ուղղաթիռներ գրոհեցին Շուշիի կողմից: Այդ օրը Ստեփանակերտի վրա արձակվեցին 200 հրթիռ և մի քանի այլ տիպի արկեր:

Ադրբեջանի «բնաջնջողական պատերազմի» քաղաքականության հետևանքով ԼՂՀ մայրաքաղաքում և այլ բնակավայրերում ստեղծվել էր օրհասական կացություն: Չկար հեղուկ վառելիք, իսկ մայիսի 1-ից լրիվ անջատվել էր էլեկտրաէներգիան: Հաց թխվում էր բացառապես զինվորների և հիվանդների համար: Հազարավոր ընտանիքներ մնացել էին անօթևան: Հարյուրավոր ընտանիքներ ստիպված էին Ստեփանակերտից տեղափոխվել գյուղեր: Ահա թե ինչու Շուշիի և մյուս կրակակետերի ոչնչացումն ու Հայաստանի հետ ցամաքային կապի ապահովումը դարձել էին կենաց ու մահվան հարց: Այդ էին թելադրում նաև երկրամասի շրջափակումը, շուրջօրյա հրթիռակոծումը, ստեղծված ծանր վիճակը: Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը մայիսի 8-ի երեկոյան հաղորդել է Երևան. «Վերջին շաբաթվա ընթացքում ադրբեջանցիները լայնածավալ հարձակումներ էին գործում Ստեփանակերտի վրա: Վիճակն անտանելի էր դառնում: Եվ մայիսի 7-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի

[18] «Ազգ», 9. 05. 1992:

նախագահության նիստը պաշտպանության խորհրդից պահանջեց լռեցնել թշնամու կրակակետերը, ապահովել խաղաղ բնակչության անվտանգությունը... Մենք ապրելու այլ տարբերակ չունենք: Իրադրությունն այժմ բարդ է, և մենք ամեն ինչ անելու ենք, որպեսզի Շուշին դադարի ԼՂՀ-ի հանդեպ ագրեսիայի օջախ լինելուց»[19]:

1992 թ. մարտ-ապրիլին ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի հրամանատար Արկադի Տեր-Թադևոսյանը կազմեց Շուշիի ազատագրման օպերատիվ պլանը: Այն մշակվել է խիստ գաղտնի պայմաններում: Օպերացիան ստացել էր «Հրազդան» կոդային անվանումը: Ա. Տեր-Թադևոսյանը հակառակորդի մասին ստացած բոլոր տվյալների մասին տեղյակ էր պահում Հայաստանի պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանին և ԼՂՀ պաշտպանության կոմիտեի նախագահ Սերժ Սարգսյանին:

1992 թ. մայիսի 4-ին, երբ ամեն ինչ պատրաստ էր, Ա. Տեր-Թադևոսյանը ստորագրեց Շուշիի ազատագրման մարտական գործողությունների հրամանը: Մայիսի 8-ի գիշերվա ժամը 2[30]-ին Շուշիի ուղղությամբ արձակված առաջին արկերը ազդարարեցին գրոհի սկիզբը: ԻՊՈ շտաբը գտնվում էր Շոշ գյուղի բարձունքում: Շուշիի ազատագրումը փափագում էր ողջ հայությունը: Հայաստանից Արցախ էին եկել ՀՀ ՊՆ շտաբի պետ, գեներալ Գուրգեն Դալիբալթյանը, օպերատիվ վարչության պետի տեղակալ Լեոնիդ Մարտիրոսյանը, բժիշկների մի քանի բրիգադ, կապի աշխատողներ, պատրաստի վիճակում էին ուղղաթիռները, Գորիսի մոտերքում կենտրոնացվել էին պաշտպանության նախարարության ուժեր և այլն:

Համաձայն մարտական հրամանի՝ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը կազմված էին չորս հարձակողական խմբերից՝ հյուսիսային, արևելյան, հարավային և հյուսիս-արևմտյան: Հարձակման նախօրյակին՝ մայիսի 7-ի ուշ երեկոյան, տեղի ունեցած ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության որոշմամբ անմիջապես տեղի ունեցած հանրապետության պաշտպանության խորհրդի նիստը որոշեց առանց ուշացնելու սկսել Ստեփանակերտի շուրջը գտնվող թշնամու բոլոր կրակակետերի ոչնչացման գործողությունները[20]: Այդ ժամանակ, ըստ տվյալների, հակառակորդն ուներ 2300 մարդ, իսկ ԼՂՀ ԻՊՈ-ն՝ 1700: Վազգեն Սարգսյանը, իմանալով այդ մասին, տարակուսեց և չհավատաց, որ այդքան քիչ մարդկանցով հնարավոր է կռվել ու հաղթել, այդ այն դեպքում, երբ Շուշիի ազատագրման համար նախատեսվում էր ունենալ առնվազն 10 հազար մարտիկ: Սակայն ռազմական գործողությունների պլանը այնպես էր մշակված, որի հաջողության համար կասկած չկար:

Իրոք, Շուշիի օպերացիան ռազմագիտության պատմության մեջ եզակի երևույթ էր: Շուշիի ազատագրման գործողություններին մասնակցել է 60 ջոկատ: Գլխավոր ուղղությունների պատասխանատուներն էին հրամանատարներ Սեյրան Օհանյանը, Վիտալի Չիթիչյանը, Արկադի Կարապետյանը, Աշոտ Ղուլյանը, Դուշմանը (Վարդան), Սամվել Բաբայանը, Յուրա Հովհաննիսյանը, Վալերի Բալայանը, Նվեր Չախոյանը և ուրիշներ: Շուշիի օպերացիայի ժամանակ կամավորական և կադրային սպաները դարձել էին անքակտելի միասնություն: Նրանց ռազմահրամանատարական միտքը կենտրոնացված էր «Հրազդան» և «Հարսանիք լեռներում» օպերատիվ պլանների իրագործման վրա: Ըստ Ա. Տեր-Թադևոսյանի բացատրության՝ այդ երկու պլանների միջև էական տարբերություններ չկային, սակայն առաջնությունը տրվել է «Հարսանիք լեռներում» տարբերակին, որի քարտեզ-պլանը գտնվում էր բացառապես գլխավոր հրամանատար Ա. Տեր-Թադևոսյանի մոտ: Նա հպարտությամբ է նշում, որ Շուշիի գրավումը ռազմական արվեստի փայլուն օրինակ էր, և որ դա հնարավոր եղավ հայ ռազմական մտքի, մարտիկների սըխ-

[19] «Երկիր», 9. 05. 1992:

[20] «Արցախ», 30. 05. 1992:

ռանքների և ոգու արիության շնորհիվ: Շուշիում տեղի ունեցավ այն, ինչ հայտնի է վաղուց. եթե քո ոգին ավելի բարձր է, քան թշնամունը, ապա վաշտը կարող է հաղթել գնդին:

1992 թ. մայիսի 9-ին Շուշին ազատագրվեց: Հակառակորդը տվեց 300 զոհ, 600–700 վիրավոր, 13 գերի, իսկ հայկական կողմը՝ 57 զոհ, 120 վիրավոր: «Շուշիի ազատագրման համար» մեդալով պարգևատրվել են ավելի քան 1000 հոգի: Ըստ ԼՂՀ ԳԽ կազմած ցուցակի՝ Շուշիի ազատագրմանը անմիջականորեն մասնակցել են 775 հոգի[21]:

Շուշիի ռազմական գործողություններն առաջին լուրջ մարտական մկրտությունն էին ԼՂՀ ԻՊՈ-ի համար և իրենց արժանի տեղը գտան հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության տարեգրության մեջ: Շուշիի ազատագրումը բարձրացրեց մեր ժողովրդի մարտական ոգին և բարոյահոգեբանական հարված հասցրեց թշնամուն, որը հետո չկարողացավ ազատվել պարտվողի հոգեբանությունից:

1992 թ. մարտի 11-ին ԼՂՀ ԳԽ-ն, դիմելով հանրապետության բնակչությանը, նշեց. «Արցախի ազատագրական պայքարը թևակոխում է իր բախտորոշ փուլը... Մենք ետ չենք կանգնի մեր ընտրած ուղուց: Ազատագրությունը գերադասում ենք կյանքից, որովհետև չենք դատապարտվել հավերժական ստրկության...

Մեզ է վիճակված կերտել մեր ապագան, մեր պայքարը խարսխվում է մեր հավաքական կամքի, անմնացորդ նվիրումի և կազմակերպության վրա: Վերջնական հաղթանակի համար դառնանք միասնական ոգի և մարմին»[22]:

Շուշին հավերժ է ու մնայուն: Շուշին հայի հպարտությունն է, նրա գոյապայքարի ոգին:

---

[21] Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական արխիվ, ֆ. 254, ց. 1, գ. 15, թ. 8–28:

[22] «Երկիր», 12. 05. 1992: